



INTERNATIONAL MONETARY FUND



Մամլո հաղորդագրություն թիվ
ԱՆՀԱՊԱՂ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ
23 հունիսի 2017թ.

International Monetary Fund
Washington, D.C. 20431 USA

**ԱՄՀ Գործադիր խորհուրդը եզրափակում է IV Հոդվածի շրջանակում
խորհրդակցությունը և ավարտում
Հայաստանի «Երկարաձգվող ֆինանսավորման ծրագրի» հինգերորդ՝ վերջին
ամփոփիչ ստուգումը**

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Գործադիր խորհուրդն այսօր ավարտեց «Երկարաձգվող ֆինանսավորման» (EFF) եռամյա ծրագրի շրջանակում Հայաստանի տնտեսական կատարողականի հինգերորդ և վերջին ամփոփիչ ստուգումը: Ստուգման ավարտն իշխանություններին տալիս է 15.69 միլիոն ՓՀԻ-ին (շուրջ 21.6 միլիոն ԱՄՆ դոլարին) համարժեք գումար փոխառելու հնարավորություն: Հայաստանի՝ 82.21 միլիոն ՀՓԻ (այն ժամանակ՝ շուրջ 111.57 միլիոն) գումարով «Երկարաձգվող ֆինանսավորման» եռամյա ծրագիրը հաստատվել է 2014 թ. մարտի 7-ին:

(Տե՛ս թիվ. 14/88 մամլո հաղորդագրությունը):

Գործադիր խորհուրդն այսօր եզրափակեց նաև IV Հոդվածի շրջանակում Հայաստանի հետ խորհրդակցությունը: Մամլո համապատասխան հաղորդագրությունը կիրառարկվի առանձին:

Հայաստանի վերաբերյալ Գործադիր խորհրդի քննարկումից հետո Կառավարիչ տնօրենի տեղակալ և նախագահի պաշտոնակատար պրն. Թաո Ժանգն ասաց.

“Հայաստանը բախվել է դժվարին արտաքին պայմանների, որոնք նպաստել են

ներքին պահանջարկի գապմանը, հարկաբյուջետային թույլ եկամուտներին և

գնանկումային պայմաններին: Այնուամենայնիվ, ծրագրի կատարողականը բավարար է եղել: 2016 թ. դեկտեմբերի վերջի բոլոր քանակական կատարողական չափորոշիչները, կողմնորոշիչ թիրախները և կառուցվածքային հենանիշները կատարվել են: Ակնկալվում է, որ 2017 թ. և միջնաժամկետ հատվածում տնտեսական աշխուժությունը կմեծանա, սակայն նվազման ուղղությամբ ռիսկերը և կառուցվածքային զգալի մարտահրավերները պահպանվում են:

“Հաշվի առնելով փխրուն աճը, տնտեսության ցիկլային դիրքը և եկամուտների կանխատեսվող գերակատարումը՝ 2017 թ. բյուջեի համեմատ աճի համար նպաստավոր արտաքին ֆինանսավորմամբ կապիտալ ծախսերի աճը հիմնավորված է: Միաժամանակ իշխանությունները հավատարիմ են միջնաժամկետ շրջահայաց հարկաբյուջետային ուղուն՝ եկամուտների մոբիլիզացումը ամրապնդելու և ծախսերի արդյունավետությունը բարձրացնելու համար: Նոր հարկային օրենսգիրքն անհրաժեշտ է մանրակրկիտ կերպով իրականացնել՝ դիմակայելով դրա դրույթների մեղմացման ուղղությամբ ճնշումներին: Կարևոր է նաև միջնաժամկետ հարկաբյուջետային շրջանակի արդիականացումը՝ հաշվի առնելով, որ հարկաբյուջետային գործող կանոնը ճկունության պակաս ունի և նկատի չի առնում ցիկլայնության պայմանները:

“Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության պայմանների մեղմումը վերջին երկու տարիներին օգնել է նվազեցնել շուկայական տոկոսադրույքները և օժանդակել է բանկային վարկավորման սկիզբ առնող

վերականգնմանը: Առաջիկայում դրամավարկային քաղաքականությունը պետք է շարունակի կենտրոնանալ գնաճը միջնաժամկետ թիրախին վերադարձնելու վրա: Կենտրոնական բանկը պետք է մոնիթորինգի ենթարկի քաղաքականության վերջին գործողությունները և գնահատի պայմանների հետագա մեղմման անհրաժեշտությունը: Բացի այդ, ճկուն փոխարժեքը պետք է շարունակի հանդես գալ որպես ցնցման կլանիչ՝ օգնելով աջակցել արտաքին ճշգրտմանը և պահպանել քաղաքականության բուֆերները:

“Կառուցվածքային բարեփոխումների հետամուտ լինելը շարունակում է կարևորվել կայուն և ներառական աճի խթանման համար: Ներքին մրցակցության ամրապնդումը և կանոնավոր բարեփոխումները առանցքային են մասնավոր հատվածի զարգացումը խթանելու և տնտեսության բազմազանեցման համար: Այս համատեքստում ողջունելի են աճի խթանմանն ուղղված իշխանությունների նախաձեռնությունները”

Հալաստան. Ընտրված ֆինանսատնտեսական ցուցանիշները 2014–19 թթ.

	2014	2015	2016		2017		2018	2019
	Փաստ	Փաստ	CR 16/380 ^{1/}	Նախն	CR 16/380 ^{1/}	Կանխ	Կանխ	Կանխ
Ազգային եկամուտ և գներ.								
Իրական ՀՆԱ (տոկոսային փոփոխություն)	3.6	3.2	2.4	0.2	2.7	2.9	2.9	3.0
Համախառն ներքին արդյունք (միլիարդ դրամ) 2/	4,829	5,044	5,151	5,076	5,405	5,362	5,710	6,117
Համախառն ներքին արդյունք (միլիոն ԱՄՆ դոլար)	3,889	3,529	3,568	3,533	3,626	3,668	3,829	4,021
ՍԳԻ (ժամանակահատվածի միջին, տոկոսային փոփոխություն)	3.0	3.7	-1.4	-1.4	1.6	1.7	3.5	4.0
ՍԳԻ (ժամանակահատվածի վերջ, տոկոսային փոփոխություն)	4.6	-0.1	-0.5	-1.1	2.8	1.8	4.0	4.0
ՀՆԱ դեֆլյատոր (տոկոսային փոփոխություն) 2/	2.3	1.2	0.0	0.5	2.2	2.6	3.5	4.0
Փող և վարկավորում (ժամանակահատվածի վերջ)								
Փողի բազա (տոկոսային փոփոխություն)	-0.1	3.9	4.9	13.1	8.8	3.0	11.3	8.0
Փողի զանգված (տոկոսային փոփոխություն)	8.9	10.7	13.9	16.6	10.5	8.4	10.3	8.0
Կենտրոնական կառավարության գործառնություններ (ՀՆԱ-ի տոկոս)								
Եկամուտ և դրամաշնորհներ (ՀՆԱ-ի տոկոս)	21.7	20.9	21.2	20.8	21.8	21.9	21.9	22.7
Որից՝ հարկային եկամուտ (ՀՆԱ-ի տոկոս)	8.3	7.5	19.5	6.7	20.2	7.2	7.2	7.9
Ծախսեր (ՀՆԱ-ի տոկոս)	21.7	23.4	27.1	23.8	24.6	23.0	22.4	22.1
Ընդհանուր հաշվեկշիռ՝ դրամարկղային սկզբունքով (ՀՆԱ-ի տոկոս)	-2.1	-4.8	-5.9	-5.6	-2.8	-3.3	-2.7	-1.7
Պետական և պետության կողմից երաշխավորված պարտք (ՀՆԱ-ի տոկոս)	43.6	48.7	54.7	55.1	56.4	55.7	57.0	56.4
Արտարժույթային պարտքի մասնաբաժին (տոկոս)	86.2	86.9	85.5	84.4	85.0	87.1	88.0	87.7
Արտաքին հաշվառում								
Ապրանքների և ծառայությունների արտահանում (միլիոն ԱՄՆ դոլար)	3,319	3,137	3,384	3,501	3,585	3,870	4,128	4,370
Ապրանքների և ծառայությունների ներմուծում (միլիոն ԱՄՆ դոլար)	-5,487	-4,418	-4,327	-4,569	-4,672	-5,083	-5,273	-5,506
Ապրանքների և ծառայությունների արտահանում (տոկոսային փոփոխություն)	5.2	-5.5	7.9	11.6	5.9	10.6	6.7	5.9
Ապրանքների և ծառայությունների ներմուծում (տոկոսային փոփոխություն)	0.2	-19.5	-2.0	3.4	8.0	11.2	3.8	4.4
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (ՀՆԱ-ի տոկոս)	-7.6	-2.6	-2.9	-2.7	-4.0	-3.8	-3.2	-3.0
Պարտքի սպասարկման հարաբերակցություն (Ա և Ծ արտահանման տոկոս) 3/	8.6	12.5	7.2	6.6	8.1	7.3	7.5	7.8
Համախառն միջազգային պահուստներ (միլիոն ԱՄՆ դոլար)	1,489	1,771	1,953	2,204	1,981	2,259	2,458	2,755
Ներմուծման ծածկույթ 4/	4.0	4.7	5.0	5.2	5.0	5.2	5.4	5.8
Փոխարժեքը ժամանակահատվածի վերջում (դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց)	475	484	...	484	...	...	...	...
Միջին փոխարժեք (դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց)	416	478	...	480	...	...	...	...

Աղբյուրները՝ ՀՀ իշխանությունները և աշխատակազմի գնահատականները և կանխատեսումները

1/ Չորրորդ ամսականի չստուգման համար աշխատակազմի զեկույցը

2/ 2015 թ.-ին իշխանությունները սկսեցին ՀՆԱ-ն հաշվարկել 2008 թ. ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ) մեթոդաբանության կիրառմամբ: 2012 թ. -ից սկսած ՀՆԱ չարքը նրանք վերանայեցին:

3/ Պետական և պետության կողմից երաշխավորված պարտքի հիման վրա

4/ Համախառն միջազգային պահուստներն՝ ըստ հաջորդ տարվա ապրանքների և ծառայությունների ներմուծման ամիսների, այդ թվում՝ պահվող ՓՀԻ: